



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**Հանրային լրագրության ակումբ,  
Մանե Աբրահամյանին  
(էլ. հասցե՝ maneabrahamyan89@gmail.com)**

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարանում 2021 թվականի հուլիսի 26-ին մուտքագրված Ձեր 2021 թվականի հուլիսի 25-ի հարցման՝ իրազեկման կարգով տեղեկացվում է, որ 2021 թվականի հունվարից մինչ այժմ ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ավագանու կողմից մարզպետարան որոշումներ չեն ներկայացվել: Համայնքի ավագանու կողմից մարզպետարան ներկայացված որոշումները հրապարակված են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում՝ **armavir.mtad.am**՝ հետևյալ կարգավորմամբ՝ «Համայնքներ» բաժնի «Համայնքի ավագանու որոշումներ» ենթաբաժնի «Եղեգնուտ (բնակչության թիվը՝ 2053)» դասիչում, իսկ համայնքի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերը՝ նույն բաժնի «Համայնքի ղեկավարի որոշումներ և կարգադրություններ» ենթաբաժնի «Եղեգնուտ (բնակչության թիվը՝ 2053)» դասիչում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Եղեգնուտ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ-թիվ 31-33 որոշումներով վաղաժամկետ դադարեցվել են համայնքի ավագանու անդամներ Հովհաննես Մարգարյանի, Գրիշա Ռաշոյանի և Մարգար Մարգարյանի լիազորությունները: Նշված անձանց կողմից իրենց վերաբորող որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով բողոքարկվել են ՀՀ վարչական դատարն, որի արդյունքում ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի մարտի 2-ի թիվ ՎԴ/1674/05/21 վարչական գործով կայացված որոշմամբ Գրիշա Ռաշոյանի, մարտի 4-ի թիվ ՎԴ/1693/05/21 վարչական գործով կայացված որոշմամբ Մարգար Մարգարյանի և մարտի 5-ի թիվ ՎԴ/1681/05/21 վարչական գործով կայացված որոշմամբ Հովհաննես Մարգարյանի հայցադիմումները վարույթ են ընդունվել:

Եղեգնուտ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N36-Ա որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել է համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանի լիազորությունները: Նշված որոշումը մարզպետարան մուտքագվելուց հետո, սահմանված կարգով և ժամկետում, ՀՀ Արմավիրի մարզպետի դեկտեմբերի 30-ի N01/10.1/07680-2020 գրությամբ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Նախարարության կողմից 2021 թվականի փետրվարի 12-ի ՆՍՊ/14.1/3150-2021 գրությամբ առաջարկվել է հիմք ընդունել ավագանու որոշումը և նշանակել Եղեգնուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Նույն գրությամբ տեղեկացվել է նաև, որ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու վերաբերյալ կառավարության որոշման նախագիծը կմշակվի և շրջանառության մեջ կդրվի Հանրապետությունում ռազմական դրության ավարտից հետո:

Վերոգրյալը հիմք ընդունելով, ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 24-ի ՆՄՈ/63-2021 որոշմամբ, Ազատ Գրիգորյանը նշանակվել է ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Ներկայացված գործերի շրջանակներում Եղեգնուտ համայնքի նախկին ղեկավար Ռազմիկ Մարգարյանի կողմից վարչական դատարան բողոքարկվել է ինչպես համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ N36-Ա որոշումը, այնպես էլ ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 24-ի Եղեգնուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու մասին ՆՄՈ/63-2021 որոշումը, համապատասխանաբար՝ ավագանու որոշումը անվավեր ճանաչելու, իսկ մարզպետի որոշումն առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջներով:

Նշված պահանջների հիմքով ՀՀ վարչական դատարանի մարտի 4-ի թիվ ՎԴ/1646/05/21 վարչական գործով և հունիսի 18-ի թիվ ՎԴ/5732/05/21 վարչական գործով կայացված որոշումներով Ռազմիկ Մարգարյանի հայցադիմումներն ընդունվել են վարույթ, իսկ վարչական դատարանի հունիսի 18-ի նույն թիվ ՎԴ/5732/05/21 վարչական գործով կայացված մեկ այլ որոշմամբ էլ՝ դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավվել է Ազատ Գրիգորյանը:


Վերոգրյալ իրավակարգավորումները հիմք ընդունելով տեղեկացվում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է և նշված վարչական գործերին կարող եք ծանոթանալ այցելելով <<DataLex>> դատական տեղեկատվական համակարգ:

**Հարգանքով՝**

**Ա. Հովհաննիսյան**

 Недействительная подпись



VERIFIED OCSF 29.07.2021 15:42:58 GMT+4

Կար.՝ Ն. Պեդրոսյան  
Լ. Հարությունյան

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հեռ.՝ 023727649